# ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:

# THE EPIDEMIC SITUATION ON COMMUNICABLE AND NON-COMMUNICABLE DISEASES IN ARMENIA.

# ЭПИДЕМИЧЕСКАЯ ОБСТАНОВКА ПО ИНФЕКЦИОННЫМ И НЕИНФЕКЦИОННЫМ ЗАБОЛЕВАНИЯМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ.

**ԱՊՐԻԼ 2023**

**APRIL 2023**

**АПРЕЛЬ 2023**

## ՎԱՐԱԿԻՉ ԵՎ ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

**Աղիքային վարակիչ հիվանդություններ**

Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի ապրիլ ամսին աղիքային վարակիչ հիվնադություններով պայմանավորված համաճարականյին իրավիճակը հարաբերականորեն հանգիստ է:

2023 թվականի ապրիլ ամսին արձանագրվել է աղիքային վարակիչ հիվանդության 555 դեպք, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ցածր է 1.1 անգամ: 2023 թվականի ապրիլ ամսին աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկումներ չեն արձանագրվել:

**Սուր արտաընդերային վիրուսային հեպատիտներ**

Հայաստանի Հանրապետությունում 2023 թվականի ապրիլ ամսին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ սուր արտաընդերային վիրուսային հեպատիտի հիվանդացության ցուցանիշը չի փոխվել:

Սույն թվականի ապրիլ ամսին արձանագրվել է սուր արտաընդերային վիրուսային հեպատիտի 1 դեպք:

**Քիմիական թունավորումներ**

2023 թվականի ապրիլ ամսվա ընթացքում արձանագրվել է քիմիական թունավորումների 212 դեպք, որոնց 42%-ը գրանցվել է Երևան քաղաքում, իսկ 58%-ը՝ մարզերում: Արձանագրված դեպքերի գերակշիռ մասը 29.7%-ը՝ օրգանական լուծիչների, մասնավորապես՝ շմոլ գազի և այլ կենցաղային նյութերի թունավոր ազդեցությունից թունավորումներ են, 27.8%-ը՝ ալկոհոլային թունավորումներ՝ ալկոհոլի բարձր չափաբաժինների ընդունումից, 22.2%-ը՝ դեղամիջոցներով՝ ինքնաբուժման,

ինքնասպանության և ծնողի անուշադրության հետևանքով առաջացած, 10.8%-ը՝ թունավոր կենդանիների խայթոցի արդյունք, 3.8%-ը՝ օճառների և լվացող նյութերի թունավոր ազդեցության, 2.8%-ը՝ թունաքիմիկատների, 2.4%-ը՝ այլ և չճշտված ծագման թունավոր նյութերի ազդեցության արդյունք, և 0.5%-ը՝ խոտաբույսերից:

2023թ. ապրիլ ամսին քիմիական թունավորումների հիվանդացության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 1.1 անգամ:

**Սուր շնչառական վարակներ**

2023 թվականի 18-րդ շաբաթվա ընթացքում արձանագրվել է ՍՇՎ-ով և գրիպով պայմանավորված ցածր ինտենսիվության ակտիվություն: Նախորդ շաբաթվա միևնույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է հիվանդացության նվազում՝ 1,2 անգամ, իսկ նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի համեմատ հիվանդացությունը նույնքան ցածր է: ՀՀ մարզերից ՍՇՎ-ով պայմանավորված միջին ինտենսիվության ակտիվություն է արձանագրվել միայն Արարատի մարզում, իսկ մնացած մարզերում և Երևան քաղաքում՝ ցածր ինտենսիվության ակտիվություն: Ընդհանուր դեպքերի 76%-ը կազմում են 0-18 տարեկան երեխաները: Շտապ օգնության կանչերի 7%-ը պայմանավորված են ՍՇՎ-ով:

Շարունակական իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքում վերջին նշված շաբաթվա ընթացքում իրականացված լաբորատոր հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել են գրիպ Ա տեսակի H1N1 ենթատեսակի և գրիպ Բ տեսակի, ինչպես նաև կորոնավիրուսային հիվանդության Sars-Cov-2 հարուցիչներ:

**Կառավարելի վարակիչ հիվանդություններ**

2023 թվականի ապրիլ ամսին Հայաստանի Հանրապետությունում կառավարելի վարակիչ հիվանդությունների առումով համաճարակային իրավիճակը բարենպաստ է եղել: Չեն գրանցվել պոլիոմիելիտի, դիֆթերիայի, կարմրախտի, համաճարակային

պարոտիտի դեպքեր: Արձանագրվել է կարմրուկի բերովի դեպք, որը տեղայնացվել է: Մայիսի 8-ի դրությամբ գրանցվել է կարմրուկի լաբորատոր հաստատված 142 դեպք:

## EPIDEMIC SITUATION ON COMMUNICABLE AND NON-COMMUNICABLE DISEASES IN THE REPUBLIC OF ARMENIA

### Intestinal infectious diseases

In April 2023, the epidemic situation on intestinal infectious diseases is relatively calm.

In April 2023, 555 cases of infectious intestinal disease were recorded in RA, which has been decreased by 1.1 times compared to the same period. In April 2023, no outbreaks of infectious intestinal diseases recorded.

### Parenteral acute viral hepatitises

The incidence rate of parenteral acute viral hepatitises remains unchanged compared to the same [previous period.

In April of the current year, 1 case of parenteral acute viral hepatitises recorded.

### Chemical poisoning

212 cases of chemical poisoning has been registered during April 2023, 42% of which has been registered in Yerevan, 58% - in marzes. 29.7% of the recorded cases are from the toxic effects of organic solvents, in particular, carbon monoxide and other household substances, 27.8% - alcohol poisonings from ingestion of high doses, 22.2% - drug poisoning are the result of self-medication, suicide and parental neglect, 10.8% from bites and stings of poisonous animals, 3.8% - from toxic effects of soaps and detergents, 2.8% from pesticides, 2.4% from the effects of other and unspecified toxic substances, 0.5% from herbs.

Compared to the previous year, in April 2023, the incidence rate of chemical poisoning increased 1.1 times.

## Acute respiratory illnesses

During the 18th week of 2023 low-intensity of acute respiratory infections and influenza were recorded. Compared to the same period of the previous week, the incidence rate decreased by 1.2 times, and compared to the same period of the previous year, the incidence rate is equally low. According to the analysis by marzes, activity intensity caused by ARI was recorded in Ararat marz and low-intensity – in other marzes and Yerevan. 76% of total cases were recorded among population aged 0-18 years. 7% of emergency calls are due to ARI.

As a result of laboratory research, influenza A virus H1N1 subtype and B virus pathogens, as well as the coronavirus disease SARS-COV-2 pathogens were found during the mentioned week of 2023.

## Vaccine-preventable infectious diseases

In April 2023 the epidemic situation in the Republic of Armenia in terms of vaccine-preventable infectious diseases was favorable. No cases of poliomyelitis, diphtheria, rubella, epidemic parotitis were recorded. An imported case of measles was recorded, which has been localized. As of May 8, 142 laboratory-confirmed cases were recorded.

## ЭПИДЕМИЧЕСКАЯ ОБСТАНОВКА ПО ИНФЕКЦИОННЫМ И НЕИНФЕКЦИОННЫМ ЗАБОЛЕВАНИЯМ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

### Кишечные инфекционные заболевания

В Республике Армения эпидемическая ситуация, вызванная кишечными инфекционными заболеваниями, относительно спокойная.

В апреле 2023 года было зарегистрировано 555 случаев кишечных инфекционных заболеваний, что в 1.1 раза меньше в сравнении с тем же периодом 2022г. В апреле 2023 вспышек кишечных инфекционных заболеваний зарегистрировано не было.

### Острые парентеральные вирусные гепатиты

В Республике Армения в апреле 2023 года по сравнению с тем же периодом предыдущего года показатель заболеваемости острыми парентеральными вирусными гепатитами не изменился. В апреле этого года зарегистрирован 1 случай острого парентерального вирусного гепатита.

### Химические отравления

В течение апреля в Республике Армения было зарегистрировано 212 случаев химических отравлений, 42% из которых было зарегистрировано в городе Ереване, 58% - в марзах. Большинство зарегистрированных случаев – 29.7% - от токсического воздействия органических веществ, в частности, угарного газа и других бытовых химичесих веществ, 27.8% - алкогольные отравления в результате приема высоких доз, 22.2% - отравление медикаментами в результате самолечения, с целью самоубийства и по невнимательности родителей, 10.8% являются следствием укусов ядовитых животных, 3.8% - от токсического воздействия мыла и других моющих средств, 2.8% - пестицидов, 2.4% - в результате воздействия других и невыясненных токсических веществ, 0.5% - в результате приема в пищу различных трав и комнатных растений.

В апреле 2023 года заболеваемость химическими отравлениями выросла в 1.1 раза по сравнению с тем же периодом предыдущего года.

**Острые респираторные вирусные заболевания**

На 18-й неделе 2023 года была зафиксирована активность низкой интенсивности, вызванная ОРВИ и гриппом. По сравнению с тем же периодом прошлой недели было зафиксировано снижение заболеваемости – в 1,2 раза, а по сравнению с тем же периодом прошлого года – так же в 1.2 раза. 76% от общего числа случаев приходится на долю детей в возрасте от 0 до 18 лет. 7% вызовов скорой помощи вызваны ОРВИ.

В результате лабораторных исследований, проведенных в течение последней недели, обнаружены возбудители гриппа А подтипа H1N1, гриппа В, а также возбудители коронавирусного заболевания Sars-Cov-2.

**Вакциноуправляемые инфекционные заболевания**

В апреле 2023 года эпидемическая ситуация в Республике Армения по управляемым инфекционным заболеваниям была благоприятной. Случаев полиомиелита, дифтерии, краснухи, эпидемического паротита не зарегистрировано. Зарегистрирован завозной случай кори, который был локализован. По состоянию на 8 мая зарегистрировано 142 лабораторно подтвержденных случаев.